ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ, ԿԱՊԻ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

N 08/15.1/21235-17

«22» 11 2017թ.

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն»
ՀԿ նախագահ
տիկին Լիանա Դոյդոյանին

Ի պատասխան Ձեր 2017 թվականի նոյեմբերի 15-ի հարցման՝ տեղեկացնում ենք.

1. Համաձայն կնքված պայմանագրերի՝ 2017թ. «Հայաստանի ավտոմոբիլային ճանապարհների տնօրինություն» և «Հեռահաղորդակցության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ներին համապատասխանաբար հատկացվել է 208.3 մլն դրամի և 309.7 մլն դրամի չափով պետական աջակցություն աշխատակազմերի պահպանման ծախսերն իրականացնելու նպատակով: Դրամաշնորհային մրցույթի մասնակցած և հաղթած կազմակերպություններ չկան:

2. ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության 2017 թ. առաջին կիսամյակի՝ ՀՀ պետական բյուջեով սահմանված ծրագրերի իրականացումը բնութագրող արդյունքի ցուցանիշների կատարման մասին ամփոփ հաշվետվությունը հրապարակված է նախարարության պաշտոնական կայքում՝ հետևյալ հղմամբ. http://www.mtcit.am/pages.php?lang=1&id=94&page_name=reports:

3. 2017 թվականի ընթացքում ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կողմից հասարակական կազմակերպություններին ու հիմնադրամներին նվիրատվություններ, սուբսիդիաներ, «գնումներ» և այլ ֆինանսավորում չի տրվել:

Հարգանքով՝ Ս. ԱՄԻՐԽԱՆՅԱՆ

ՖՏևՀՀվարչություն Վ. Աթյան 590111
08-03